

ՖՐՈՄՈՆ ԿՐՏՍԵՐ

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

I

Կնոջս ընդունելութեան օրը:

Կէսօր է: Մառէ թաղը նախաճաշում է:

Եկեղեցիների զանգահարութեան ծանր զողանջին խառնուում է,—բակերից բարձրանալով,—գործարանների զանգակների բարակ զնդզնդոցը: Այդ զանգահարութիւններից իւրաքանչիւրը ունի իր տարբեր բնաւորութիւնը: Որը տիսուր է, որը ուրախ, որը ժիր է, որը թմրած: Կան հարուստ, բախտաւոր զանգեր, որոնք հնչում են հարիւրաւոր բանուորների համար. կան աղքատ, երկչոտ զանգեր, որոնք կարծէք թագնուում են ուրիշների յետենում ու աշխատում կուչ գալ, փոքրանալ, կ'ասես վախինալիս լինեն, որ մնանկութիւնը կը լսի նրանց ձայնը: Վերջապէս կան և խարերայ, անդգամ զանգեր, որոնք հընչում են զրսեի համար, փողոցի համար, որպէս զի հաւատացնեն ամենքին, թէ իրանց առետրական տունը նշանաւոր տուն է և բաղմաթիւ մարդիկ են բանում այստեղ:

Փառք Աստուծու, Ֆրօմօնների գործարանի զանգը դրանցից չէ: Մի կարգին, հին ու մի քիչ ճաքած զանդ է այդ, որ արդէն քառասուն տարի ծանօթ է Մառէյում և որ երեէք անգործ չէ մասցել բացի կիրակիններից և խոռվութիւնների օրերից:

Նրա ձայնը հնչելուն պէս բանուորների մի ահագին բազմութիւն անցնում է հինաւուրց ապարանգի դարպասի մէջով և անհետանում շրջակայ գինետուններում: Աշակերտ բանուորները նստատում են մայթերի և զերքներին որմնադիրների հետ միասին: Խաղալու համար մի կէս ժամ յետ քցելու համար նրանք նախաճաշում են հինգ բոպէում, դնելով զանազան ուտելեղէններ, որ փողոցային վաճառողները Պարիզում ման են ածում

անտունների և աղքատների համար, — չագանակ, ընկոյզ, խնձոր, —և նրանց կողքին որմնադիմները կտոր-կտոր ևն անում ալիւրից ու գաճից բոլորովին սպիտակած մեծ-մեծ բրդոններ: Կանաք վառաղ-վառաղ վազում են զանազան կողմեր: Նրանք բոլորն էլ տնտեսութեան վերաբերեալ գործեր ունեն, կամ թէ մի երեխայ կամ մի ծերացած ազգական, որին պէտք է ինսամել տանը կամ ապաստարանում: Արհեստանոցների խեղդող օդիցը չնշասպան, կոպերն՝ ուռած, մազերը՝ խունացած թաւշաթղթի հազարեր մանր փոշուց, նրանք, զամբիւղները կռներին, շտապում են այդ դուրս խուժած ամբողջով լի փողոցի միջով, ուր դժուարութեամբ են շրջագայում հանրակառքերը:

Նստած՝ զարպասի կողքի քարի վրայ, որ երբեմն իրը ստատեղ էր ծառայում ձի հեծնողների համար, Ռիսլէրը ժրպտալով նայում է բանուորների ելքին: Նրան մեծ երջանկութիւն է պատճառում միշտ սրտաբաց յարգանքը այդ ժրածան մարդկանց, որոնց նա ճանաչել էր այդտեղ, երբ ինքն էլ նրանց նման աննշան և նուաստ էր: Նրա սիրաը ջերմութիւն է զգում, երբ նա լսում է այդ «բարե, պարսն Ռիսլէր»-ը, արտասանուած այդքան տարբեր-տարբեր, բայց անխստիր գորովալից ձայներով: Երեխաները աներկիւղ մօտենում են նրան, կէս բանուոր, կէս արուեստագէտ գծագրիչները, երկար-երկար միրուվներով, անցնելիս ձեռք են տալիս նրան և խօսում են հետը «գու»-ով: Թերեւս այդ բոլորի մէջ պէտք եղածից մի քիչ աւելի ընտանեկանութիւն կայ, որովհետև այդ մարդը գեռ չէ ըմբռնել իր նոր դիրքի վեհութիւնն ու հեղինակաւորութիւնը, և ես զիտեմ մէկին, որ շատ նուաստացուցիչ է համարում այդ ապատ արձակ վերաբերմունքը: Բայց այդ մէկը չէ կարող նրան տեսնել այս րոպէին և պատրօնը օգուտ է քաղում զրանից և ուժգին կերպով գրկում ծեր հաշուապահ Սիգիզմունդին, որ ամենքից վերջն է դուրս գալիս, ձգուած, կարմրած, դէմքը ճխտած մի ահազին շապկօձիքի մէջ և—ինչ եղանակ էլ լինի—զլիսարաց, որովհետև վախում է կաթուածահար լինի:

Ռիսլէրն ու նա հայրենակիցներ են: Նրանք վերաբերուում են միմեանց խորին յարգանքով, որ սկսուել է այն հեռաւոր ժամանակներում, երբ նրանք երկուան էլ նոր էին մտել գործարանը և միասին նախաճաշում էին փողոցի անկիւնի փոքրիկ կաթնատանը, ուր Սիգիզմունդ Պլանուար մէն-մենակ է մտնում այժմ ու մի տեսակ կերակուր է ընտրում հերթական ճաշի պատիցը կախած ցանկի մէջ...

Բայց ահա կրտսեր ֆրօմօնի կառքը մտնում է դարպասով: Նա առաւօտից ի վեր շրջագայում է, և այժմ երկու ընկե-

բակիցները, դիմելով գէպի իրանց ապրած գողտրիկ տունը, որ գտնուում է պարտէզի խորքում, մտերմաբար խօսում են իրանց գործերի մասին:

—ես գնացել էի Պոչշասօնների մօտ, ասում է կրտսեր Ֆրօմօնը: Նրանք ինձ ցոյց տուին նոր տիպարներ, որոնք չառ սիրուն են... Պէտք է ուշադրութիւն դարձնել: Լուրջ մրցորդներ են նրանք:

Բայց Ռիսլէրը չէ անհանգստանում: Նա զօրեղ է զգում իրան, յոյս գնելով իր տաղանդի, իր փորձառութեան վրայ, և բացի այդ... սակայն այդ թող գաղանի մնայ... Նա արդէն մի զարմանալի գիւտ անելու վրայ է,—մի կատարելագործուած տաղագրիչ գործիք, մի այնպիսի բան... Էհ, վերջը ինքները կը տեսնեն: Այդպէս խօսելով, նրանք մտնում են պարտէզը, որ մեռապի նման են պահում, գնդածե խուզած ակացիաներով, որոնք գրեթէ նոյնքան հին են, որքան և ինքը ապարանքը, և հրաշալի բաղեղներով, որոնք ծածկում են սեացած բարձր պարփակները:

Կրտսեր Ֆրօմօնի կողքին Ռիսլէր երէցը՝ իր պատրօնին հաշիւ ներկայացնող գործակատարի տաղաւորութիւն է գործում: Ամեն քայլափոխում նա կանգ է առնում խօսելու համար, որովհետև նրա շարժուածքները ծանր են, մտածողութիւնը գանդաղ և խօսքերը դժուարութեամբ են գալիս միտքը: Ա՛հ, եթէ նա կարողանար տեսնել այստեղ, վերեռում, երկրորդ յարկի պատուհանի յետնում, այն փոքրիկ վարդագոյն դէմքը, որ ուշ ուշով դիտում է այդ բոլորը...

Տիկին Ռիսլէրը սպասում է իր ամուսնուն նախաճաշի և համբերութիւնից դուրս է գալիս, տեսնելով նրա դանդաղութիւնը: Զեռով նրան նշան է անում՝ «Դէ շուտ արա է»: Բայց Ռիսլէրը չէ նկատում այդ: Նրա ուշք ու միտքը ֆօրժի ու կէրի փոքրիկ աղջկայ հետ է, որ ծծմօր գրկին հրճուում է արեի առաջ իր ժամանեակների մէջից: Որքան սիրուն է նա:—Իսկ և իսկ ձեր պատկերն է, տիկին Շօրչ:

—Զեղ այդպէս է թուում, բարի Ռիսլէր. սակայն ամենքն ասում են, թէ նա հօրն է քցել:

—Այն, մի քիչ... բայց այնուամենայնիւ...

Եւ բոլորը միասին, հայրը, մայրը, Ռիսլէրը, ծծմայրը, լուրջ կերպով նմանութիւններ են վնտոում մարդկային այդ փոքրիկ ուրուագծի մէջ, որ նայում է նրանց իր շաղուած և արտաքին կեանքից ու արեի լոյսից շացած աչքերով: Իր կիսարաց պատուհանից Սիդօնին կռանում է տեսնելու, թէ ինչ

Են անում նրանք այնտեղ և ինչու իր ամուսինը չէ բարձրանում վերև:

Այդ բոպէին Ռիսլէրը, իր գիրկը վերցրած պստիկին,— սպիտակ կտորների և բացգոյն ժապաւէնների այդ սիրուն բեռը,— ծեր պապիկի գգուանքներով ու ծամածոռութիւններով աշխատում է ծիծաղեցնել ու ծրւծրւացնել նրան: Ո՞քան ծեր կերպարանք ունի խեղճը: Ո՞քան անչորհն ու ծիծաղելի են այդ ահազին մարմինը, որ նա աշխատում է կուչ ածել, փոքրացնել երեխայի առաջ, ու այդ կոշտ-կոպիտ ձայնը, որ նա խլացնում է քաղցրացնելու համար:

Վերսում նրա կինը ոտը խիում է գետնին ու մրթմրթում ատամների արանքով.

—Յիմար...

Վերջապէս, սպասելուց ձանձրացած, նա ուղարկում է ասելու պարոնին, որ նախաձաշը բերել են արդէն. բայց խալը այնքան տաքացել է, որ պարոնը չէ իմանում, թէ ինչպէս թողնի հեռանայ, ինչպէս ընդհատի այդ հրճուանքի բուռն արտայալտութիւնները և թուչնաձայն ծրւծրւոցները: Վերջ ի վերջոյ նա մի կերպ յետ է տալիս երեխային իր ծծմօրը և փախչում դէպի սանդուխները, ծիծաղելով ի բոլոր սրտէ: Նա գեռ ծիծաղում է սեղանատունը մտնելիս, բայց կնոջ հայեացքը սառը ջուր է ածում գլխին:

Սիդօնին նստած է սեղանի մօտ, կերակուրը դրած ջերմապահի վրայ (τέσχαυδ): Նա զո՞ի դիրք է ընդունել, և երևում է, որ վճռել է վատ տրամադրութեան մէջ մնալ:

—Վերջապէս եկաք... փառք Աստուծու:

Ռիսլէրը նստում է, փոքր ինչ ամօթահար:

—Մի նեղանար, փոքրիկա: Այդ երեխան այնքան...

—Ես ձեզ արդէն ինզրել եմ, որ «դու»-ով չը խօսէք ինձ հետ: Մեր մէջ այդ չը պէտք է լինի:

—Բայց չի որ մենք մենակ ենք այժմ:

—Է՞հ, դուք երբէք չէք կարողանալու յարմարուել մեր նոր գիրքին... Եւ ինչ է դուրս գալիս: Ոչ ոք այստեղ յարգանքով չէ վերաբերում դէպի ինձ: Աշխալ քեռին, այդ ծեր գոնապանը, հազիւ հազ է զուլս տալիս, երբ ես անց եմ կենում նրա սենեակի առաջով... Ի հարկէ, ճիշտ է, որ ես ֆրօմօն չեմ և սեփական կառք չունեմ...

—Է՞հ, փոքրիկս, դու... այսինքն... դուք լաւ գիտէք, որ դու... որ դուք կարող եք միշտ լծել տալ տիկին Շօրչի կառքը: Նա միշտ մեր տրամադրութեան տակ է զնում իր կառքը:

— Քանի անգամ պէտք է ասեմ, որ ես չեմ ուզում ոչընչով պարտաւորուած լինել այդ կնոջը:

— Ա՛խ, Սիդօնի...

— Հա, հա, գիտեմ, գիտեմ, այդ արդէն յայտնի է... տիկին Ֆրօմօնը երկնքից իջած Աստուած է: Ոչ ոք իրաւոնք չունի նրան դիպէելու: Եւ ես պարտական եմ խոնարհ կերպով տանել այն բանը, որ ես ոչինչ եմ այս տանը. պէտք է թողնեմ, որ ինձ ստորացնեն, ուսնատակ տան:

— Է՞հ, Է՞հ, փռքրիկս...

Խեղճ Ռիսլէրը աշխատում է առարկել, մէկ երկու խօսք ասել յարդարացումն իր սիրելի տիկին Շօրչի: Բայց նա ճարպիկ չէ: Յօնքը դրստելու տեղ աշքը հանում է, և Սիդօնին ձեռաց կրակ է կարում:

— Ես ձեզ ասում եմ, որ, չը նայելով իր անդորր կերպարանքին, այդ կինը գոռող է ու չարաժիրտ... Նախ և առաջ, նա ինձ ատում է. այդ ես լաւ գիտեմ... Քանի որ ես գեռ առաջուան փոքրիկ ու աղքատ Սիրոնին էի, որին նա շպրտում էր իր կոտրտած խաղալիքները ու հին հագուստները, բանը լաւ էր գնում. բայց այժմ, որ ես էլ նրան հաւասար գործարանատիրուհի եմ,— այդ նրան զայրացնում է ու նուաստացնում... Այդ աղջիկ-պարոնը ինձ խորհուրդներ է տալիս բարձրից, արածներս քննադատում է... Զնոր եմ աղջիխն վարձել... Ի հարկէ: Զէ որ ես սովոր եմ ինքս ինձ աղախնութիւն անել... Նա ամեն տեսակ առիթ է փնտուում ինձ վիրաւորելու համար: Երբ չուրեցարթի օրերը գնում եմ նրա մօտ, պէտք է լսել, թէ ինչ եղանակով է բոլորի առաջ հարցնում, թէ ինչպէս է տիկին Շէրը... Է՞հ, շատ լաւ, այն, ես Շէր եմ, իսկ նա Ֆրօմօն է: Մէկ մէկի արժենք կարծեմ: Իմ պապս գեղագործ էր: Իսկ նրանն ինչ է: Վաշխառութեամբ հարստացած մի գիւղացի... Օ՞հ, ես նրան կ'ասեմ այդ բանը այս օրերս, եթէ քիթը շատ բարձրացնի. այն էլ կ'ասեմ, որ նրանց աղջիկը, թէն իրանք այդ չեն նկատում, նմանում է այդ ծեր Գարդինուա պապին. իսկ նա, Աստուած էլ գիտի, որ սիրուն չէ:

— Օ՞հ, ասում է Ռիսլէրը, որ խօսք չէ գտնում պատախանելու համար:

— Ի հարկէ. ես ձեզ խորհուրդ եմ տալիս զմայլելու նրանց երեխայի վրայ: Միշտ հօ հիւանդ է: Ամբողջ գիշերը կատուի պէս մլաւում է: Զէ թողնում, որ քնեմ... Յետոյ էլ, ամբողջ օրը գլուխս տանում են մօր գաշնամուրն ու անվերջ կլկոցները... արա լա լա լա... Գոնէ մի ուրախ երաժշտութիւն էլ է լինէր:

Ոիսէրը հնարը գտել է։ Ոչ մի ձայն չէ հանում, իսկ մի քիչ անցած, երբ տեսնում է, որ կինը սկսել է մնղմանալ, բոլորպին հանգստացնում է նրան հաճոյախօսութիւններով։

—Ո՞քան սիրոն է նա այսօր։ Երեխ այցելութիւններ պէտք է անել նախաձաշից յետոյ...»

«Դու»-ով խօսելու վտանգից խուսափելու համար, նա անորոշ ու անդէմ զարձուածքներ է գործ ածում։

—Զէ, ես այցելութիւններ չեմ անելու այսօր, պատասխանում է Սիդօնին մի տեսակ հպարտութեամբ։ Ես, ընդհակառակը, ընդունում եմ այցելութիւններ։ Իմ ընդունելութեան օրն է այսօր...»

Եւ տեսնելով ամուսնու զարմացած ու շփոթուած կերպարանքը, վրայ է ըերում։

—Այն, այն, իմ ընդունելութեան օրն է... Տիկին Ֆրօմօնն ունի իր օրը. կարծում եմ, ես էլ կարող եմ ունենալ իմը։

—Ի հարկէ, ի հարկէ, ասում է խեղճ Ռիսէրը, որ նայում է շուրջը փոքր ինչ անհանգստութեամբ... Ա՞յդ է ուրեմն պատճառը, որ այսօր այնքան ծաղիկ կայ ամեն տեղ, վերնագաւթում, դահլիճում։

—Այն, այս առաւօտ աղախինը իջաւ պարտէզը... Գուցէ լաւ չեմ արել։ Հա, դուք չեք ասում այդ բանը, բայց ես հաւատացած եմ, որ դուք կարծում էք, որ լաւ չեմ արել... Տէր Աստուած։ Ես կարծում էի, թէ պարտէզի ծաղիկները նոյնքան մեզ են պատկանում, որքան և նրանց։

—Անշնչում... բայց և այնպէս դու... դուք... գուցէ աւելի լաւ լինէր...»

—Թոյլտուութիւն խնդրել... Հա... էլի՞ ստորանալ, այն էլ մի քանի անպէտք ոսկեծաղիկների ու երկու-երեք շիւղ կանաչի համար։ Վերջապէս, ես հօ գողանի չեմ քաղել տուել այդ ծաղիկները, և երբ տիկին ֆրօմօնը այժմ գայ վերեն...»

—Միթէ գալու է։ Ախ, որքան սիրալիր է նա։

Սիդօնին ծով ելաւ տեղից, զայրացած։

—Ի՞նչպէս թէ «որքան սիրալիր է նա»... Այդ էր պակաս, որ դեռ չը գայ էլ։ Հապա ես ինչո՞ւ եմ ամեն չորեքշաբթի զընում ձանձրանալու նրա մի ամբողջ խումբ քրքրուան ու ծամածուող հիւրերի հետ։

Նա լութեան է տալիս այն բանը, որ տիկին ֆրօմօնի այդ չորեքշաբթիւնները մեծ ծառայութիւններ են մաստոցել իրան, չէ ասում, որ նրանք մօդային շաբաթաթերթի տեղ են բռնում նրա համար, այն փոքրիկ, խան բովանդակութեամբ հանդէսներից մէկի տեղը, որոնց մէջ տպուած է լինում, թէ ինչպէս պէտք է

սենեակ մտնել, դուրս գալ, բարեել, ինչպէս պէտք է ծաղիկները զնանեղել ծաղկարանում ու սփարները ծխարանում, գեռ չը հաշուած նկարները, չորհալի հագուստնեցնի տիպարները և լաւ գերձակուհիների անունները: Սիդօնին չէ ասում նաև, թէ կլէրի այդ բարեկամուհիներին, որոնց մասին այժմ այդքան արհամարհանկով է խօսում, բոլորին էլ ինքը աղաչել է, որ գան իրան մօտ, և թէ հէնց նրանք են ընտրել նրա ընդունելութեան համար ուրբաթ օրը:

Կը գան արդեօք նրանք: Արգեօք տիկին Ֆրօմօն կրտսերը սիրո կ'անէ վիրաւորել տիկին Ռիսլէր երէցին, չը գալով նրա առաջին ընդունելութեան օրը: Այդ հարցը այնքան անհանգըստացնում է նրան, որ նա տիկին մէջ է զգում իրան...

— Ենուտ արէք, շուտ, ամեն րոպէ ասում է Սիդօնին Ռիսլէրին... Որքան ծանր էք նախաճաշում, Տէր Աստուած:

Ճիշտ որ Ռիսլէրը սիրում է դանդաղ ուտել և ծխել չիրուխը հացի վրայ, կում-կում ծծելով սուրճը: Այսօր նա ստիպուած է հրաժարուել իր այդ սիրելի սովորութիւններից, ծուխ չանելու համար չիրուխը չը հանել պատեանից և վերջին պատառն ուտելուն պէս՝ գնալ ձեռաց հագնուել որովհետեւ կինը պնդում է, որ կէս օրից յետոյ նա գայ վերև ողջունելու իրան այցելող տիկիններին:

Պէտք էք տեսնել, թէ որքան զարմացան գործարանում, տեսնելով որ Ռիսլէր երէցը այդ լի օրը իջնում է ներքն սև սիւրտուկով, ու հանդիսարեայ փողպատով:

— Վա, հարսանիք ես գնում, ձայն է տալիս նրան գանձապահ Սիդիզմունդը իր վանդակապատի յետեից:

Եւ Ռիսլէրը պատասխանում է ոչ առանց մի փոքր հպարտութեան.

— Կնոջս ընդունելութեան օրն է այսօր:

Քիչ անցած, ամենքն էլ իմանում են, որ Սիդօնիի ընդունելութեան օրն է այդ օր, և Աշելլ քեռին շատ էլ գոհ չէ մնում, տեսնելով, որ կարել են պարտէզի մոտ եղած ձմերային դափնիների ճիւղերից մի քանիս:

Ռիսլէրը իր արհեստանոցում տախտակի առաջ նստած զծագրում է բարձր պատուհանների պայծառ լոյսով: Նա հանել է վրայից իր գեղեցիկ սիւրտուկը, որ նեղութիւն է տալիս նրան, և վեր է քաշել շապկի բոլորովին թարմ թէքերը. բայց այն միտքը, որ իր կինը ճիւղերի է սպասում, զբաղեցնում ու անհանգստացնում է նրան և նա ժամանակ առ ժամանակ հագնուում ու շիտկուում է վերև գնալու համար:

— Մարդ չի եկել, — հարցնում է նա վախիխելով:

—Զէ, ոչ ոք չի եկել, պարոն:

Նքեղ կարմիր դահլիճում,—որովհետև նրանք կարմիր դամասկով պատած մի դահլիճ ունեն, որի պատուհանների արանքին դրուած է մի կօնսօլ և բացգոյն ծաղիկներով գորգի մէջտեղը՝ մի սիրուն սեղան,—Սիդօնին բազմել է հիւրեր ընդունող տիկնոջ դիրքով, շրջապատուած շրջանաձև շարուած բազկաթուներով ու աթոռներով: Այստեղ այնտեղ երեսում են գրքեր, գրական հանդէմներ, մի փոքրիկ զամբիւղ ձևագործի համար, հիւսուած մետաքսէ փնջուղներից, մի փունջ մանիշակ բիւրեղէ բաժակում և կանաչ բոյսեր ծաղկարաններում: Այդ բոլորը դասւորուած է ձիչտ այնպէս, ինչպէս մի յարկ ներքեւ ֆրումնաների մօտ, միայն թէ ճաշակը,—այդ աննշմարելի զիծը, որ բաժանում է գուեհկականը ազնիւից,—դեռ չէ հասել նրբութեան: Կարծես թէ մէկը մի գեղեցիկ ժանրային պատկեր է, խակ միւսը՝ նրա միջակ պատճէնը: Տանտիրուհին ինքն էլ այնպիսի շոր է հագել, որ շատ նոր է, այնպէս որ նա աւելի հիւրի տպաւորութիւն է գործում քան իր տանը հիւր ընդունողի: Ռիսլէրին որ հարցնես, ամեն ինչ հիւնալի է ու ոչ մի պակաս տեղ չունի: Նա պատրաստուում է այդ ասել դահլիճը մտնելիս, բայց ինո՞ց զայրագին հայեացքի առաջ ինեղճ մարդը կանգ է առնում վախվիսելով:

—Տեսմում էք, արդէն ժամի չորսն է, ասում է նա նրան, բարկացկոտ շարժումով ցոյց տալով պատի ժամացոյցը... Բչ ոք չի գալու... Բայց ամենից աւելի բարկութիւնս բերում է կլէրը... Նա տանն է... ես հաստատ գիտեմ... ես լսում եմ, որ այստեղ է...

Ցիրաւի, կէսօրից սկսած, Սիդօնին ականջ է գնում ներքեի յարկից լսուող բոլոր ձայներին, երեխայի ճըւղին, վակուող դռան ճըստոյին: Ռիսլէրն ուզում է գնալ արհեստանոցը, փախչել նախաճաշի խօսակցութիւնից, որ վերսկսուում է, բայց այդպէս հեշտ չէ կարող պլծնել կողջ ձեռքից: Քանի որ ամենքը բարձիթող են արել իրան, թող գոնէ ամուսինը ընկերութիւն անէ իրան, և խեղճ ամուսինը մնում է վերեւում, անշարժ, տեղումը մեխուած, այն մարդկանց նման, որոնք չեն համարձակւում իրար գալ փոթորիկի ժամանակի, վախենալով իրանց կողմը քաշել կայծակը: Սիդօնին յուզում է, գնում գալիս է դահլիճում, փոխում է ոյս կամ այն աթոռով տեղը, նորից տեղն է գնում, անցողակի նայում է ինքն իրան հայելու մէջ, զանգը տալիս է, կանչում է աղախնին, ուղարկում Աչիլլ քեռու մօտ, որպէս զի իմանայ, ոչ մարդ չի հարցրել իրան: Այնքան շար

մարդ է այդ Աշխը քենին, որ գուցէ հարցնող լինելիս ասում է, թէ նա դուրս է եկել տանից:

Բայց չէ, դռնապանը դեռ ոչ ոքի չի տեսել:

Լութիւն ու լքումն: Սիդօնին կանգնել է ձախակողմի պատուհանում. Ծիսէրը՝ աջակողմի: Սյնտեղից նրանք տեսնում են փոքրիկ պարտէզը, ուր ակսում է արդէն մութն ընկնել, և սև ծուխը, որ բարձր ծինելոյզը դուրս է թողնում դէպի ցածիկ երկինքը: Սիդիզմունդի պատուհանը լուսաւորւում է առաջինը ներքենի յարկում. գանձապահը ինքն է սարքում իր լամպը մանրակրկիտ խնամքով, և նրա երկար ստուերը ման է գալիս բոցի առաջ ու երկուտակ է լինում վանդակապատի մօտ: Սիդօնիի բարկութիւնը մի բոպէ փարատում է այդ ծանօթ մանրամասնութիւնները տեսնելիս:

Յարկարծ մի փոքրիկ կառօք մտնում է պարտէզը և գալիս կանգնում է դռան առաջ: Վերջապէս մի եկող եղաւ: Մետաքսի, ծաղկիների, սև սաթէ ուլունքների, երիզների ու մուշտակեղէնի այդ մրցիլը արագ-արագ մտնում է նեկան. Սիդօնին ճանաչում է այդ կնոջը. նա Ֆրօմօնների դահլիճի ամենագողարիկ յաճախողներից մէկն է, մի հարուստ բրօնզավաճառի ամուսին: Ո՛քան պարձանք է ընդունել այդպիսի մի հիւր: Շտապ-շտապ տանտէրերը բննում են իրանց տեղերն ու դիրքերը,—մարդը նստում է բուխարիի մօտ, կինն էլ բազմում բազկաժոռի մէջ ու ակսում անհոգաբար թերթել ինչ-որ մի ամսագիր: Զուր աշխատանք: Գեղեցկուհի հիւրը Սիդօնիի մօտ չէր եկել. նա մտաւ ներքենի յարկը...

Օ՛, Կթէ տիկին Ժօրժը կարողանար լսել, թէ ինչ է ասում իր գրացունին նրա ու իր բարեկամունիների մասին...

Այդ բոպէին դուռը բացւում է և գեկուցանում են.

—Օրիորդ Պլանուս:

Գանձապահի քոյրն է այդ, մի նուաստ, քաղցրաբարոյ ու խեղճ պառաւ աղջիկ, որ պարտականութիւն է համարել այցելել այդ օրը իր եղբօր պատրօնի կնոջը և մնացել է ապշած, տեսնելով թէ ինչպէս սիրալիր կերպով են ընդունում իրան: Շրջապատում են նրան, գլխովը պտոյտ են գալիս: «Ո՛քան սիրալիր է ձեր կողմից... Մօտեցէք, իննդրեմ, կրակին»: Ի՞նչ ուշադրութեամբ, ինչ հետաքրքրութեամբ են լսում նրա ամենաչին խօսքերը: Բարեհոգի Ծիսէրը այնպէս սրտանց է ժպտում, կարծես չնորհակալութիւն է յայտնում: Նոյն իսկ Սիդօնին ամեն կերպ գգւում է նրան, ուրախանալով, որ կարող է իր փառքի մէջ երևալ իր մի ժամանակուայ հաւասարին և որ ներ-

քեռւմ տիկին Ֆրօնօնը կը լսի, որ իր մօտ մարդիկ են եկեր Ուստի որքան կարելի է շատ աղմուկ է հանում, գրգռացնելով բազկաթուները, յետ ու առաջքաշելով սեղանը, և երբ պառա օրիորդը գնում է, շացած, զմայլած ու շփոթուած, Սիդօնին ճանապարհ է քցում նրան մինչև սանդուխները, խչխացնելով շրջազգեստի ծալազարդերը, և բարձրածայն գոռում է նրա յետեից, կոանալով վանդակի վրայով, թէ ինքը տանն է լինում միշտ ուրբաթ օրերը... Լսում էք, ուրբաթ օրերը...

Արդէն գիշեր է այժմ: Դահլիճի երկու ահազին լամպերը վառել են: Կողքի սենեակում լսում է աղմուկ, աղախինը ճաշը քցում է: Վերջացաւ: Տիկին Ֆրօնօն կրտսերը չի գայ:

Սիդօնին կապտել է բարկութիւնից.

—Տեսնում էք այդ քրքրուանին, որ չի կարողանում բարձրանալ տասնութ աստիճան վերե... Տիկինը մեզ անշուշտ շատ չնշին արարածներ է համարում իր համեմատութեամբ... Օ՛հ, շատ լաւ, ես վրէժս կը հանեմ...

Եւ որքան աւելի է դուրս զեղում նա իր զայրոյթը այդպիսի անարդար խօսքերով, այնքան աւելի նրա ձայնը գոեհկանում է, արուարձանային ելեէջներ է ստանում և բառերի արտասանութիւնը դառնում է ուամիկան, պարզ ցոյց տալով, որ խօսողը առաջ աշակերտուհի է եղել օրիորդ իը Միրի արհեատանցուում:

Ռիպէրը դժբախտութիւն է ունենում մի խօսք ասելու:

—Ո՞վ գիտի: Դուցէ երեխան հիւանդ է եղել:

Սիդօնին կատաղած շուռ է գալիս գէպի նա, կարծես ու զելով կծել նրան:

—Գլուխս մի տանէք, խնդրեմ, այդ երեխայովի Խոկապէս դուք էք մեղաւոր, որ այսպիսի բան է գալիս իմ գլխին... Դուք չէք կարողանում այնպէս անել, որ ինձ յարդանքով վերաբերուեն:

Եւ նրա սենեակի դուռը շրմկալով փակւում է դոզդոզացնելով լամպերի գունդերը և դարակներում դարսած բոլոր զարդարանքները, ու Ռիպէրը մնում է մենակ, անշարժ գահլիճի մէջտեղում, յուսահատ դէմքով նայելով իր սիփսպիտակ շապկաթերերին ու փայլակած լայն կօշիկներին և մերենայօրէն մրմռալով.

—Կնոջս ընդունելութեան օրը:

II

Իսկական մարգարիտ եւ կեղծ մարգարիտ

«Ի՞նչ է պատահել հետո... ի՞նչ եմ արել նրան», հարցնում էր յաճախ ինքն իրան կէր Ֆրօմոնը, մտածելով Սիդօնիի մասին:

Նա ոչինչ չը գիտէր այն բանի մասին, որ երբեմն տեղի էր ունեցել Սալինիում իր բարեկամուհու և Ժօրժի մէջ: Նրա պէս շիտակ բնաւորութիւն ու անդորր հոգի ունեցողը չէր կարող գուշակել, թէ ինչ նախանձու ու ստոր փառասիրութիւն էր աճել նրա կողքին տասնհինգ տարուց ի վեր: Բայց և այս պէս, այդ սիրուն դէմքի հանելուկային հայեացքը, որ սառաառը ժամում էր նրա երեսին, շփոթեցնում էր նրան, թէև նա չէր հասկանում թէ ինչու: Մանրակրկիտ քաղաքավարութեանը, որ շատ տարօրինակ էր Սիդօնիի պէս մանկութեան ընկերուհու կողմից, յաջորդում էր յանկարծ վաս քօղարկուած զայրովթ, ձայնի չոր ու կծու արտայայտութիւն, որի առաջ կէրը մնում էր չուարած, ինչպէս մի հանելուկի առաջ: Երբեմն այդ անհանգստութեանը միանում էր նաև մի տարօրինակ նախազգացումըն, սրտի մի անորոշ վկայութիւն, թէ մեծ դժբախտութիւն է գալու նրա գլխին. որովհետև կանաքը բոլորն էլ մի քիչ զերբնածես են (νογαντε, յանուածայզայ), և նրանցից ամենապարզասիրաների մէջ անգամ չարիքի խորին անգիտութիւնը լուսաւորում է երեմն-երբեմն զարմանալի պայծառութիւն ունեցող յանկարծական տեսիլքներով:

Մի-մի անգամ փոքր ինչ երկար խօսակցութիւնից յետոյ, այն անակնկալ հանդիպումների ժամանակ, երբ յանկարծակիի բռնուած դէմքերը թոյլ են տալիս պարզ տեսնելու իրանց իսկական մտածմունքները, տիկին Ֆրօմոնը լուրջ կերպով միտք էր անում այդ տարօրինակ, փոքրիկ Սիդօնիի մասին, բայց եռուն ու ստիպողական կեանքը, պատելով նրան մտերմական յարաբերութիւնների ու հոգսերի մթնոլորտով, ժամանակ չէր տալիս նրան կանգ առնելու դրա նման մանր հարցերի վրայ:

Իսկապէս կանաքը ունեն միշտ մի հասակ, երբ նրանց կեանքը ճանապարհը այնպիսի յանկարծական պատուանքներ է անում, որ բոլոր հորիզոնները փոխւում են, բոլոր տեսակէտները յեղացըլում են:

Զահէլ աղջիկ ժամանակը նա սաստիկ կը վշտանար անշուշտ, եթէ այդպէս մաս առ մաս զրկուէր Սիդօնիի բարեկա-

մութիւնից, որ կարծես մի չար ձեռք պատռում տանում էր կը-
տոր-կտոր: Բայց նա զրկուել էր հօրից, որ նրա ջանէլ ժամա-
նակուայ ամենազլիսաւոր, նոյն իսկ միակ սիրոյ առարկան էր:
այնուհետեւ ամուսնացել էր: Յետոյ էլ ծնուել էր երեխան,
որի քաղցր պահանջներին բաւարարութիւն պէտք էր տալ ա-
մեն բոպէ: Բացի այդ, նրա մօտն էր կենում գրեթէ բոլորովին
երեխայցած մայրը, որ աւելի ևս ապուշ էր կտրել իր ամուս-
նու աղէտալի մահի չնորհիւ: Այդքան զբաղուած կեանքի մէջ
Սիդօնիի քմահաճոցիները շատ քիչ տեղ էին բանում, և կլէր
Ֆրօմօնը գրեթէ չը զարմացաւ, երբ նա ամուսնացաւ Ռիսլէրի
հետ: Անկասկած Ռիսլէրը շատ մնձ էր նրա համար, բայց որ
իրար սիրում էին:

Ինչ վերաբերում է ցաւ զգալուն, որ փոքրիկ Շէրը հա-
սել էր այդպիսի բարձր դիրքի ու գրեթէ իր հաւասարը դարձել,
— նրա բնուորութիւնը այնքան վեհ էր, որ անընդունակ էր այդ
տեսակ փոքրուգութեան: Նա ի բոլոր սրտէ կը ցանկանար,
ընդհակառակը, բախտաւոր ու յարգուած տեսնել այդ ջանէլ
կնոջը, որ կենում էր նրա կողքին, ապրում էր, այսպէս սսած,
նրա կեանքով և եղել էր նրա մանկութեան ընկերուհին: Նա
փորձեց ամենայն քաղցրութեամբ սովորեցնել նրան աշխար-
հիկ նիստ ու կացը, մարդամէջ զուրս բերել նրան, ինչպէս
անում են լաւ օժտուած գաւառացուհիների հետ, որոնց շատ
քիչ բան է պակասում պամնէլի կին դառնալու համար:

Երկու ջանէլ ու սիրուն կանագը հեշտութեամբ խորհուրդ
չեն ընդունում իրարից: Երբ տիկին Ֆրօմօնը մի մեծ ճաշկե-
րոյթի օր տիկին Ռիսլէրին տարաւ իր սենեակը ու ուղիղ երե-
սին ժամանով ասաց, որպէսզի չը նեղանայ. «Շատ զուգսեղէն
կայ վրադ, հոգիս... Համ էլ՝ օձիքը բարձր զգեստ հազնելիս ծա-
ղիկ չեն խրում մազերին...»: Սիդօնին կարմրեց, չնորհակալու-
թիւն յայտնեց, բայց սրտի խորդումը մի աւելորդ քիչ էլ ար-
ձանագրեց նրա դէմ:

Կլէրի շրջանում բաւական սառն ընդունեցին նրան:

Սէն-Ժէռմէնի արուարձանը *) իր յաւակնութիւններն
ունի, ի հարկէ, բայց կարծում էք՝ Մառէն չունի:

Խոշոր արդիւնագործողների ու հարսւատ գործարանատէ-
րերի այդ կին ու աղջիկները գիտէին փոքրիկ Շէրի պատմու-
թիւնը և վերջապէս հէնց նրա բարեկը և իրան պահելու ձեզ
բաւական էր, որ նրանք հասկանացին նրա ով լինելը:

*) Փարիզի Սէն-Ժէռմէնի արուարձանում ապրում է աղնուական դասը,

Սիդօնին շատ էր աշխատում կոկուել, բայց ի զուր, — նա էլի մնում էր խանութում ծառայած օրիորդ։ Նրա փոքր ինչ բռնասղրօսիկ և երեմն չափազանց խոնարհ սիրավեռութիւնը վատ տալաւորութիւն էր գործում, գործակատարների խօսելու կեղծ եղանակի նման, իսկ նրա արհամարհու դիրքերը յիշեցնում էին նորութիւնների խանութների գլխաւոր գործակատարուհիներին, որոնք, — պինուած և մետաքսէ զգեստով, որ երեկոյեան տուն գնալիս հանում թողնում են խանութի հանդերձարանում, — իրանց խոպապ դրած մազերի բարձրութիւնից վեհ կերպով նայում են այն մանր մունք մարդկանց վրայ, որոնք թոյլ են տալիս իրանց սակարկութիւն անել:

Նա զգում էր, որ իրան զննում ու քննադատում են, և ստիպուած էր վախիվսելով սպառազինուել պատերազմ մղելու համար։ Այն անունները, որ արտասանում էին մօտը, այն զըւարձութիւնները, տօնախմբութիւնները, գրքերը, որոնց մասին խօսում էին հետաք, բոլորն էլ անծանօթ էին նրան։ Կլէրը ամեն կերպ աշխատում էր տալ նրան հարկաւոր տեղեկութիւնները և միշտ օգնութեան պարզուած բարեկամական ձեռքով պահում էր նրան իր դիրքին վայել աստիճանի վրայ։ Բայց տիկիններից շատերը գտնում էին, որ Սիդօնին սիրուն է։ Այդ բաւական էր, որպէս զի նրանք դժգոհ լինէին այն բանից, որ նա մտել էր նրանց շրջանը։ Ոմանք էլ, գոռող իրանց ամուսինների դիրքով ու իրանց հարստութեամբ, ամեն կերպ աշխատում էին ստորացնել այդ փաքքիկ նորելուկին ամբարտաւան լուակեցութեամբ և զիջողական քաղաքավարութեամբ։

Սիդօնին նրանց բոլորին ամփոփում էր մի խօսքի մէջ, — կլէրի բարեկամուհիները, այսինքն իր անձնական թշնամինները... Բայց նա լուրջ կերպով քէն էր զգում միմիայն իրան, կլէրի դէմ։

Երկու ընկերակիցները, Ռիսլէրն ու Ժօրժը, կասկած անդամ չէին տանում իրանց կանանց մէջ անցած-դարձածի մասին։

Ռիսլէր երէցը, շարունակ ուշ ու միաքը տուած իր տպագրիչ մեկնայի գիւտին, երբեմն մինչև կէս զիշեր մնում էր նստած իր գծագրութեան սեղանի առաջ։ Ֆրօմօն կրտաւերը ամբողջ օրը դրւեն էր լինում, նախաճաշում էր ժողովարանում և զրեթէ երբէք ոսք չէր դնում գործարանը։ Նա յարգելի պատճառներ ունէր այդ բանի համար։

Սիդօնիի մօտիկութիւնը քրդովմունք էր քցում նրա սիրաբը։ Այն քմահաճ, կրքոտ զգացմունքը, որ նա տածում էր երեխեմն դէպի այդ կինը, այն սէրը, որ նա զոհեց իր հօրեղբօր վերջին կամքը կատարելու համար, շատ յաճախ էր գալիս նրա.

միաքը, սաստիկ ափսոսանք ազգերով, որ բանն անկարելի է ուղղել, և նա, թոյլ զգալով իրան, փախուստ էր տալիս: Թուլամորթ, կրաւարական բնաւորութեան տէր մարդ էր նա, այնքան խելօք, որ կարող էր ճանաչել ինքն իրան, բայց և այնքան թոյլ, որ անկարող էր կառավարել ինքն իրան: Ռիսլէրի հարասանիքի երեկոյեան, ինքն էլ գեռ հաղիւ մի քանի ամսուայ պսակուած, նա նորից զգաց Սիդօնիի վերաբերմամբ Սավինիի փոթորկալից երեկոների բոլոր յուզմունքը: Այն օրից ի վեր նա, առանց ինքն իրան պարզ հաշիւ տալու, խուսափում էր Սիդօնիին տեսնելուց ու հետը խօսելուց: Դժբախտաբար, նրանք մի և նոյն տանն էին ապրում և տիկինները օրը տասն անգամ այցելութիւններ էին անում միմեանց, այնպէս որ միշտ տեղի էին ունենում պատահական հանգիպունքներ, և ահա զրա չնորհիւ առաջ եկաւ այն տարօրինակ երևոյթը, որ այդ մարդը, կամենալով ազնիւ ամուսին մնալ իր կնոջ վերաբերմամբ, բոլորովին կարուել էր տանից և զուարձութիւններ էր վինտուամ զրսեսում:

Այդ չէր զարմացնում Կլէրին: Հանգուցեալ հայրը սովորեցրել էր նրան այն բանին, որ առևտրական մարդու տեղը դրսեն է լինում միշտ, և Ժօրժի բացակայութեան ժամանակ՝ նա, բոլորովին նուիրուած իր ամուսնական ու մայրական պարտականութիւններին, տևողական գործեր ու ամեն տեսակ աշխատանքներ էր հնարում ինքն իր համար, երեխային տանում էր զբուժնելու, երկար ու ծիգ հանգիստ էր առնում հետը արև տեղերում, յետոյ էլ վերադառնում տուն՝ հիացած իր աղջկայ յառաջադիմութիւնից, համակուած մանր երեխաների բացօքեայ հրճուամբներով ու ծիծալներով և պահած իր լուրջ աչքերի խորքում այդ փաքրիկների պայծառութիւնից:

Սիդօնին էլ շատ էր գուրս գալիս տանից, Յաճախ, գիշերուայ գէմ, Ժօրժի կառքը, դարպասով անցնելիս, ստիպում էր շտապով մի կողմ քաշուել շքեղազգեստ տիկին Ռիսլէրին, որ վերադառնում էր տուն զրեթէ ամբողջ Պարիզը ոսնատակ տալուց յետոյ Բուլվարը, խանութներում ցուցադրուած իրերը և գնելքները, —որ նա շատ ծանր ու բարակ էր ջոկում, կարծէք գնելու նոր զուարձութիւնը որքան կարելի է լաւ ճաշակելու համար, —շատ երկար էին պահում նրան զրսեսում Նրանք բարեսում էին միմեանց սանդուինների պատուանքում, սարն հայեացը փոխանակելով իրար հետ, և Ժօրժը շտապով մտնում էր իր բնակարանը, իբրև մի ապաստարան, ու աշխատում, գգուանքներ թափելով երեխայի վրայ, ծածկել վրդովմունքը, որ յանկարծ տիրել էր սրտին:

Սիդօնին, ընդհակառակը, կարծէք այլ ևս ոչինչ չէր յի-

շում ու միմիայն արհամարհանք էր զգում այդ մեղկ ու հեղ բնաւորութեան վերաբերմամբ։ Բացի այդ, ուրիշ շատ հոգսեր ունէր նաև։

Նրանց կարմիր դահլիճի երկու պատուհանների արանքում Ռիսլէրը վերջերը մի դաշնամուր էր դնել տուել։

Երկար տատանմունքներից յետոյ, Սիդնին վճռել էր երգեցողութիւն սովորել, մտածելով, որ մի քիչ ուշ է դաշնամուրի դասեր առնելու համար, և շաբաթը երկու անգամ մի սիրուն անտափմէնատալ շիկահեր կին, տիկին Դօբաօն, գալիս էր երգեցողութիւն դասեր տալու նրան կէսօրից մինչև ժամի մէկը։ Եւ շրջակայ բակերի լուսիւն մէջ նրա մենակի բաց պատուհաններից լուսում էին նրա երկար ու ձիգ և տասն անգամ կրկնուաղ ա... ա... ա...-երը ու օ... օ... օ...-երը, գիշերօթիկ դպրոցի կերպարանք տալով գործարանին։

Եւ յիրաւի իսկական աշակերտուհի էր այդ վարժութիւններ անողը, —մի անփորձ ու երերուն մատաղ հոգի, լի գաղտնի իղձերով և կարօտ ամեն ինչ նոր սովորելու և ճանաչելու, որպէս զի կատարեալ կին դասնարա։ Վասն այն էր միայն, որ նրա փառասիրութիւնը շատ վայրիվերոյ էր։

—Կէր Ֆրօմնը դաշնամուր է ածում. ես էլ երգել կը սովորեմ... Նրան գողարիկ ու նրբածաշակ կին են համարում. ես էլ ուզում եմ, որ նոյն բանն ասեն իմ մասին։

Առանց մի բոպէ լուրջ միտք ունենալու որ և է բան սովորել, նա անց էր կացնում իր կեանքը խանութէ-խանութ, վաճառանոցէ-վաճառանոց վազելով. «Ի՞նչ են հագնելու այս ձմեռ»։ Նրան հրապուրում էին ցոյց դրուած շքեղ բաները, այն ամենը, ինչ որ զարկում է անց ու դարձ անողների աչքին։

Այն կեղծ մարդարիաններից, որ նա այնքան երկար ժամանակ բանեցրել էր իր ձեռքում, ինչոր մի բան մնացել էր նրա մասների ծայրին, —մի քիչ նրանց յինծու սատափից, նրանց փուչ դիւրաբեկութիւնից, նրանց երեսահան փայլից։ Նա ինքն էլ իսկապէս մի կեղծ մարդարիտ էր, —կլոր, փայլուն ու լաւ սաղացրած, —որից ամրութ կարող էր խարուել. իսկ կէր Ֆրօմնը իսկական մարդարիտ էր՝ ճոխ ու միանգամայն համեստ շողբով, և երբ մարդ նրանց տեսնում էր միասին, տարբերութիւնը իսկոյն աշքի էր ընկնում։ Մարդ գուշակում էր, որ մէկը միշտ մարդարիտ է եղել, բոլորովին մանր մարդարիտ՝ մանկութեան օրերում ու այնուհետեւ աճած, մեծանալով գողտրիկութեան ու չնարհալիսւթեան տարրերով, որոնք հազուագիւտ ու անգին բնաւորութիւն են դարձրել նրան։ Միւսը, ընդհակառակը, դուրս էր եկել Փարփակութեան կոչուող հսկայական կեղծ

գոհարագործի արհեստանոցից, գոհարագործի, որ հազար ու մի մանրունկներ ունի, բոլորն էլ հիմնալի, բոլորն էլ փայլուն, բայց քիչ դիմացկուն, վատ սաղացրած ու վատ իրար կցած,—մի խօպով նա իսկական արդիւնք էր այն արհեստի, որ երբեմն բանեցրել էր և ինքը:

Սիդոնին ամենից շատ նախանձում էր Կլէրին նրա երեխալի, այդ շքեղազարդ մի մատ արարածի համար, որ ժապաւէնների մէջ թաղուած էր օրօրոցի վարագորներից սկսած մինչև ծծմօր գլխանոցը: Նա չէր մտածում համբերութեամբ ու անձնուրացութեամբ լի քաջցր պարտականութիւնների, մնկուն գիշերների երկար օրօրների և հրճուալից զարթումների մասին: Ոչ, երեխայի մէջ նա տեսնում էր միայն զրօսանքը... Ո՞րքան սիրուն բան է, երբ փողոցների յորձանքում անցնում է մի ջահէլ մայր, որին հետեւում է սաւառուն ժապաւէնների ու երկար փետուրների այդ պաճուճանքը:

Իսկ ինքը տանից դուրս գալիս կարող էր ընկեր ունենալ միայնայն իր ծնողներին կամ ամուսնուն: Նա գերադասում էր միայնակ դուրս գալ: Ո՞րքան ծիծաղելի կերպով էր արտայայտում Ռիսլէրը իր սէրը,—խաղում էր կնոջ հետ, ինչպէս երեխաները խաղում են տիկնիկի հետ, կճմուռմ էր թշերն ու կըզակը, պտոյտ-պտոյտ էր գալիս չորս կողմը՝ «հու, հու» զոռալով, և կամ թէ իր խոշոր քաղցրացած աչքերով նայում էր նըրան սիրող ու երախտագէտ շան նման: Սիդոնին ամօթահար էր լինում այդ յիմարավարի սէրից, որ նրան դարձնում էր մի տեսակ խաղալիք, յախճապակէ մի դարակազարդ: Ինչ վերաբերում էր ծնողներին, նրանցից նա քաշում էր այն մարդկանց առաջ, որոնց հետ ուղղում էր տեսնուել, և այդ պատճառով հարսանիքից յետոյ իսկոյն նա գրեթէ բոլորովին զլուին ազատեց նրանցից, մի փոքրիկ տուն վարձելով նրանց համար Մօնուռժում: Այդ միանգամբոց կտրեց պ. Շէրի յաճախակի արշաւանքները իր երկարափէշ սիւրտուկով և անվերջ այցելութիւնները սիկին Շէրի, որ սկսելով նորից բարօր կեանք վարել, դարձել էր առաջուան պէս շատախօս ու անդորձ:

Սիդոնին շատ կ'ուզէր մի և նոյն կերպով հեռացնել իրանից նաև Դըլօրէններին, որոնց դրացիութիւնը նեղում էր նըրան: Բայց Մառէն կենտրօնական տեղ էր ծեր գերասանի համար, որովհետեւ մօտիկ էր բուլվարների թատրոններից. բացի այդ, Դէղիրէն, նստական կեանք վարող բոլոր մարդկանց նման, շատ էր վարձուել իր ծանօթ հորիզոնին, և նրանց տիսուր բակը, որ ձմեռները մթնում էր ժամի չորսից ի վեր, թւում էր նրան իրք մի բարեկամ, մի ծանօթ դէմք, որ երբեմն, լուսաւորուելով

արեից, կարծես ժպտում էր նրա հասցէին, Սիդօնին, չը կարուղանալով գլխիցը հեռացնել նրանց, զինել էր այլ ևս չը տեսնուել հետները:

Վերջ ի վերջոյ, նրա կեանքը շատ տիսուր կ'ընթանար ու միայնակ, եթէ չը լինէին այն զուարձութիւնները, որ նա ըստանում էր չնորհիւ կլէր ֆրօմնիք: Եւ նա ամեն անգամ բարկութիւնից փրփրում էր, մտածելով.

—Միթէ ամեն բան նրանից եմ ստանալու միշտ:

Եւ երբ, ճայի վրայ, ներքեխ յարկից օթեակի մի համար էին ուղարկում նրան կամ երեկոյթի հրաւէր, նա հագնուելիս հրճում էր, որ կարող է իրան ցոյց տալ, բայց մի՛ և նոյն ժամանակ միայն այն էր մտածում, թէ ինչպէս գետնովը տայ իր ախոյեանին: Ասենք, այդ դէպքերը հետզհետէ հազուազիւտ էին դառնում, որովհետեւ կլէրը ստիպուած էր աւելի ու աւելի զբաղուել իր երեխայով: Սակայն երբ Գարդինուա պապը գալիս էր Պարիզ, նա միշտ միացնում էր այդ երկու ընտանիքները: Որպէս զի այդ ծեր գեղջուկի սիրաը կարողանար ուրախութիւնից բացուել, պէտք է նրա մօտ լինէր փոքրիկ Սիդօնին, որ չէր խրտնում նրա կատակներից: Նա նրանց չորսին էլ հրավիրում էր ճաշի իր սիրած՝ Ֆիլիպպի ճաշարանը, ուր նա ճանաչում էր թէ սիրոջը, թէ ծառաներին և թէ տնտեսին, շատ փող էր ծախուում այնտեղ ու յետոյ էլ այնտեղից տանում էր նրանց Օպէրակօմիք կամ Պալէ-Ռոյալ թատրոնը, ուր առաջուց օթեակ էր վերցրած լինում:

Թատրոնում նա քահ քահ ծիծաղում էր, ընտանեբար խօսում էր օթեակների գոնապան կանանց հետ, ինչպէս Ֆիլիպպի ճաշարանի ծառաների հետ, բարձր ճայնով աթոռակներ էր պահանջում տիկինների համար և գուրս գալիս ուղում էր ամեն-քից առաջ ստանալ իրանց վերարկուներն ու մուշտակները, կարծես թէ ինքը միակ նորեկուկ միլիօնատէրն էր այդտեղ:

Այդ փոքր ինչ գոհհկական զրօսանքների համար, ուրոնցից շատ յաճախ խուսափում էր Փօրժը, կլէրը իր սովորական տակտով պարզ շորեր էր հագնում և անհկատելի էր մնում: Սիդօնին, ընդհակառակը, բոլոր առագաստները պարզած, բազմում էր օթեակի առաջը և ի բոլոր սրտէ ծիծաղում պապի պատմածներին, երջանիկ, որ իր մի ժամանակուայ սովորական տեղից, երկրորդ կամ երրորդ յարկից, իջել է այդ բեմակողքի հայելազարդ գեղեցիկ օթեակները, որոնց թաւշապատ եղերքները, թւում էր նրան, թէ յատկապէս շինուած են իր բացգոյն ձեւնոցների, փղոսկրէ դիտակի և զա-

նակազարդ հովհարի համար։ Հասարակական գուարձատեղերի տափակութիւնը, և պաստառների կարմրութիւնն ու ոսկեզօն ծանրը իսկական ճոխութիւն էր թւում նրան։ Այդ միջավայրում նա փթթազարդ փայլում էր իբրև մի թղթաշխ սիրուն ծաղիկ հիւսկէն ծաղկարանի մէջ։

Մի երեկոյ, Պալէ-Ռոյալում, մի ժողովրդականութիւն վայելող թատերական գրուածքի ներկայացման ժամանակ, Սիդնիի շարժումները, հագուստը, ծիծաղելու և նայելու ձեր մեծ ուշադրութիւն զրաւեցին հարդիսատես կանանց կողմից, —այդ նկարիչների վրձինին արժանացած՝ խոշորացուցային զիսարկներով ու ահազին հովհարներով հաշակաւոր տիկինների կողմից, որսնց դեղ դրած զրուխները զգեստի իրանքի բացուածքի մէջից զուրս էին ցցւում բէնիւարի օթեակների ստուերից իբրև հազիւ հազ կենդանացած պատկերներ։ Դահլիճի բոլոր դժուակները, զեկավարուելով մագնիսական հոսանքից, որ անքան զօրնդ է ջահի լոյսով, քիչքիչ ուղղուեցին դէպի նրա նստած օթեակը։ Կլէրը վերջ ի վերջոյ սկսեց վատ զգալ իրան այդ բանից և կամացուկ փոխեց տեղը իր ամուսնու հետ, որ գժբախտաբար այդ երեկոյ նրանց հետ էր։

Ժօրժը, երիտասարդ ու գողարիկ, նստած Սիդնիի կողքին, այնպիսի տպաւորութիւն էր գործում, կարծես նրա ընական զուգակիցը լինէր, մինչդեռ նրանց յետելին Ռիսլէրը, միշտ վերին աստիճանի մեղմ ու նսեմ, բոլորովին իր տեղումն էր թւում կլէր Ֆրօմնի կողքին, որ իր փոքր ինչ միթագոյն հագուստի մէջ կարծես ծպտուած լինէր, ինչպէս մի ազնիւ կին Օպէրայի պարահանդէսում։

Դուրս գալիս՝ երկու ընկերակիցներից իւրաքանչիւրը կուռը տուեց իր հարեանուհուն։ Օթեակների դռնապան կանանցից մէկը ասաց Սիդնիին, խօսելով Ժօրժի մասին, —«Զեր ամուսինը...», և Սիդնիի դէմքը իսկոյն պայծառացաւ ուրախութիւնից։

Զեր ամուսինը։

Այդ հասարակ խօսքը բաւական էր նրան տակնուվրայ անելու և սրտի խորքումը մի ամբողջ կոյտ վատ խորհուրդներ իրար տալու համար։ Մինչ նրանք անցնում էին միջանցքներով ու ֆոյէով, նա նայում էր Ռիսլէրին ու տիկն «Շօրշին», որոնք գնում էին առջեցից։ Կլէրի գողարիկութիւնը՝ ոչնչացած, գտեհկացած էր թւում նրան Ռիսլէրի բիրտ քայլուածքի չնորհիւ։ Նա ասում էր ինքն իրան՝ «Ո՞րքան տգեղացնում է երեխ գա ինձ, երբ մենք ման ենք գալիս միասին»... Եւ նրա սիրաը սկսում է թնդալ, երբ նա մտածում էր, թէ ինչ սիրուն, երշանիկ ու

հիացմունք ազդող զոյտ կը կազմէին ինքն ու ժօրժ Ֆրոմոնը,
որի կուռը դողդողում էր այդ բոսէլին իր կռան տակ:

Եւ երբ կապոյտ կառքը մօտեցաւ թատրոնի դռանը Ֆրո-
մոններին տանելու համար, առաջին անգամը նա սկսեց մտա-
ծել, թէ իսկապէս այդ կինը խլել էր իր տեղը և թէ ինքը
կատարեալ իրաւունք ունի աշխատել նորից ձեռք բերել այդ
տեղը:

Թարգմ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

(Կը շարունակուի)